ԱԶՆԻՎ ՆՎԻՐՈՒՄՈՎ
(Ալվարդ Ղազիյանի ծննդյան 75-ամյակի առթիվ)

Իր գիտական գործունեությունը սկսելով ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում՝ Ալվարդ Սարուխանի Ղազիյանն ավելի քան չորս տասնամյակ անձնադիր նվիրումով և բարձր պատասխանատվությամբ լծվել է հայագիտության կարևոր ճյուղերից մեկին՝ բանագիտությանը:

Ա. Ղազիյանը (Ղազարյան) ծնվել է 1930 թ. դեկտեմբերի 13-ին Հայկական ԽՍՀ Իջևանի շրջանի Սարիգյուղում՝ Ղարաբաղից այստեղ տեղափոխված ընտանիքում: 1933 թ. Ղազարյանները փոխադրվում են Գանձակ (Կիրովաբադ): 1937 թ. նա ընդունվում և 1947 թ. մեդալով ավարտում է քաղաքի №10 հայկական միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի «Հայ բանասիրություն» բաժինը, որն ավարտում է գերազանցության դիպլոմով 1960թ.՝ Ալթայի երկրամասի աքսորավայրից (1949–1956 թթ.) վերադառնալուն պես:

1961 թ. հոկտեմբերին Ա. Ղազիյանն ընդունվում է ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայ ժողովրդական բանահյուսության բաժինը, որտեղ աշխատում է մինչև այժմ:

Ժողովրդագիտական իր գործունեությունը Ա. Ղազիյանն սկսում է նշանավոր բանագետ Ա. Նազինյանի ղեկավարությամբ: 1971 թ. Ա. Ղազիյանը պաշտպանում է «Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր» թեմայով թեկնածուական ատենախոսությունը՝ նվիրված հայոց երգային բանահյուսության այդ տեսակի ժանրային առանձնահատկություններին, գաղափարական բովանդակությանն ու գեղարվեստաարտահայտչական միջոցների համալիր ուսումնասիրությանը (համահավաք բնագրերի հետ տպագրվել է 1989 թ.):

1983 թ. «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարով (հ. 15) լույս է տեսնում Ա. Ղազիյանի Արցախից 1970-ական թվականներին գրի առած հեքիաթների, զրույցների, մանրապատում-զվարճախոսությունների, ավանդությունների, երգերի, մականունների, ասույթաբանա-

կան բանահյուսության նմուշները, նրա կազմած հայ մշակույթի նշանավոր երախտավոր Գ. Սրվանձտյանի երկերի առաջին հատորը («Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», «Մանանա», «Համով-հոտով», մամուլում լույս տեսած բանահյուսական նշխարները): Ա. Ղազիյանը լուրջ ներդրում ունի հայկական հեքիաթների գիտական հրատարակության և մասնավորապես դրանց սյուժեների տիպաբանական նշացանկը կազմելու ուղղությամբ: Նա կազմել և հրատարակել է «Հայ ժողովրդական հեքիաթներ» դիտական հրատարակության 13-րդ (Մուշ-Տարոն, 1985) և 14-րդ (Վասպուրական, 1999) հատորները՝ օժտված համապատասխան առաջաբաններով, բարբառային ու դժվար հասկանալի բառերի բառարանով, ցանկերով և այլն:

Հայ բանահյուսական մշակույթի գրառման և արժևորման ոլորտում կարևոր երևույթ է Ա. Ղազիյանի և Ս. Վարդանյանի հավաքած, կազմած և հրատարակած «Բաքվի հայոց բանահյուսությունը» ժողովածուն (2004 թ.): Այս աշխատության շնորհիվ բաքվահայերի բանավոր ավանդությունն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ՝ հնարավորություն ընձեռելով մեզանում եղած բանահյուսական նյութն ամբողջացնելու, զուգադրելու, նորագույն խնդիրներ առաջ քաշելու և հետազոտելու ուղղությամբ:

Ժողովրդին իր ակունքներին վերադարձնելու առումով ցուցանշական են Ա. Ղազիյանի Պ. Սևակի «Անլռելի զանգակատան» բանահյուսական հենքը» (1973), «Ղարաբաղի զվարճախոս Պըլը-Պուղին» (1978), «Հայ ժողովրդական սնահավատական զրույցների դասակարգման հարցի շուրջ» (1983), «Устное народно-поэтическое творчество Арцаха» (1990), «Сасна црер» армянский героический эпос» (1976), «Гардманк» (историко-этнографический очерк) (1992), «Հնագույն մի սովորության արձագանքները հայ բանահյուսության մեջ» (1977), «Ականատեսը Վան քաղաքի քսանամյա անցքերի մասին 1877–1897 թթ.» (1990), «Զեկույցներ Անդրկովկասի նահանգների սահմանի մասին» (1993), «Անդրկովկասի վարչական սահմանափոխումը» (1993), «Ազատագրական պայքարի արտացոլումն արցախահայոց բանահյուսության մեջ» (1995) և այլ հոդվածներ ու հրապարակումներ:

Այս ամենով հանդերձ, բանագետ Ա. Ղազիյանի ուշադրության կենտրոնում են շարունակում մնալ նաև Հայաստանի ռազմավարության տնտեսական խնդիրներն ու գիտական ժառանգության պատմագիտական մեծ արժեք ներկայացնող կարևոր ձեռագրերը, որոնց տպագրությունն ամփոփված է Ա. Ղազիյանի և Ա. Քալանթարյանի կազմած թիվ 1 և 2 «Վավերագրերում» (1999, 2001):

Ա. Ղազիյանի աշխատությունների նշանակալից բաժինը վերաբերում է Արցախի հոգևոր մշակույթին ու պատմությանը: Արցախյան ազատամարտի տարիներին նա լծվում է հարկադրական համրության մատնված արխիվային փաստաթղթերի հայտնաբերմանն ու լուսաբանմանը, ինչպես նաև որդու հետ գործնական աջակցությամբ օժանդակում է արցախահայությանը: Ա. Միրզոյանի և Ա. Ղազիյանի կազմած «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918–1920 թթ.» (2003) վավե-

րագրերի և նյութերի ստվար ժողովածուն առաջին անգամ ամբողջական տեսքով հրապարակում է Բաքվի և Ելիզավետպոլի նախկին նահանգներում թուրքական զորքերի և ադրբեջանական իշխանությունների կողմից հայ բնակչության նկատմամբ իրագործված զանգվածային կոտորածների մասին պատմող փաստաթղթեր ու նյութեր:

Ա. Ղազիյանը ընդգծված քաղաքացիական պարտքի գիտակցության տեր անձնավորություն է, նրա համար առաջնայինը պետության, հասարակության, աշխատանքի շահն է: Հավանաբար, նաև դա էր պատճառը, որ նա, օժտված լինելով համապատասխան տվյալներով, չգերադասեց հավակնել գիտական բարձր աստիճանների՝ տարիներ շարունակ պրպտելով, ծանոթագրելով ու հասարակության սեփականություն դարձնելով մեր ժողովրդի պատմության դժվարին խնդիրներին առնչվող կարևորագույն լուսաբանումներ և փաստաթղթերի ժողովածուներ:

Բանագետը հեղինակել է վեց տասնյակից ավելի գիտական, լրագրային հոդվածներ, գրախոսականներ, հրապարակումներ: Հատկապես ուշադրության են արժանի նշանավոր հայագետ-բանագետներին, հայազգի ռազմական անվանի գործիչներին նվիրված նրա հոդվածները (Գ. Սրվանձտյան, Ե. Լալայան, Խ. Դադյան, Քաջբերունի, Մ. Միանսարյան, Ա. Կիսիբեկյան, զորավարներ Մ. Լորիս-Մելիքյան, Հ. Լազարյան, Ա. Տեր-Ղուկասյան, ծովակալ Լ. Սերեբրյակով և այլք): Ուշագրավ է բազմավաստակ գիտնական-բանագետ Ս. Հարությունյանի կյանքին ու գործունեությանը նվիրված «Կենսամատենագիտությունը» (2003):

Ա. Ղազիյանը կատարել է նաև թարգմանական աշխատանքներ: 1989 թ. «Հայաստան» հրատարակչությունը լույս է ընծայում ռուսերենից նրա թարգմանած «Աֆորիզմներ» ծավալուն ժողովածուն, 1998 թ.՝ Լ. Մելիք-Շահնազարյանի «Ադրբեջանի ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ» աշխատության հայերեն թարգմանությունը:

Նա խմբագրել է բանագիտական մի քանի աշխատություններ (Գ. Միքայելյանի «Նոր-Բայազետի բանահյուսությունը» (1980), Լ. Հարությունյանի «Նշխարներ Արցախի բանահյուսության» (1991), Կ. Ղահրամանյանի «Օջախի դիրքը» (2002) և այլն:

1966 թ. ի վեր Ա. Ղազիյանն իր հայրենի եզերքի անվանի բանահավաքներից է: Նա Ղարաբաղից և հարակից հայկական շրջաններից գրի է առել արժեքավոր բանահյուսական, ազգագրական հարուստ նյութեր:

Ա. Ղազիյանը 1994 թ. ԼՂՀ գրողների միության անդամ է:

Նշանավոր բանագետ Ա. Ղազիյանն ավագ սերնդի լավագույն մտավորականներից է, ով ջանում է հայտնաբերել կարող ուժերին և ընթացք ու ուղղություն տալ նրանց հետազոտական աշխատանքներին: Դրան զուգահեռ նա շարունակում է կազմակերպել նաև գիտական գործընթացը՝ ղեկավարելով ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական տեքստաբանության բաժինը՝ ծրագրելով նորանոր անելիքներ ի շահ հայ բանագիտության:

ԹԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ